ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Պիոլոգիական գիտ. XIV, № 2, 1961 Биологические науки

ՀՈՎՍԵՓ ԱՐԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ

Փետրվարի 2-ին, Լենինգրադում վախճանվեց սովետական արևելագիտության ականավոր դեմքերից մեկը. ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ, բազմավաստակ գիտնական Հովսեփ Արգարի Օրբելին։

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին ծնվել է Թբիլիսի քաղաքում, 1887 թ. մարտի 8-ին (20-ին) հայ ընտանիքում։ Ավարտելով Թբիլիսի կլասիկ գիմնազիան, 1904 թ. նա ընդունվում է Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, որ աշակերտում է նշանավոր գիտնականներ Ժեբելյովին, Մառին, Ամիրանովին և Բարտոլդին։

Դեռևս ուսանողական նստարանից նա աչքի է ընկնում լեզվաբանության, հնագիտության, արվեստագիտության բնագավառներում։ 1909 թվականից սկսած, երբ Օրբելին տակավին 22—23 տարեկան էր, նա մասնակցում է Անիի պեղումներին և Ն. Մառի բացակայությունների ժամանակ ղեկավարում հնագիտական էքսպեդիցիան։

1911 թ. Հ. Օրբելին փայլուն կերպով ավարտում է Պետերբուրգի համալսարանի երկու ֆակուլտետ։ Նույն թվականին ռուսական Գիտությունների ակադեմիան նրան գործուղում է Թուրքիա՝ ուսումնասիրելու Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Վասպուրականի հայկական, ուրարտական և սելջուկյան հուշարձանները։ Դրա հետ միասին նա ուսումնասիրում է հայ և քուրդ բնակչության կենցաղն ու բարքերը և հարուստ նյութերով վերադառնում Պետերբուրգ։

1913 թ. Հ. Օրբելին Լենինգրադի համալսարանում հանձնում է հայվրացական ֆիլոլոգիայի գծով մագիստրոսական քննություններ և հաջորդ տարվանից այնտեղ աշխատում որպես պրիվատ-դոցենտ։

1916 թ. Ն. Մառի հետ միասին Հ. Օրբելին գործուղվում է Վան, պեղումներ կատարում և հայտնաբերում ուրարտական թագավոր Սարդուր II-ի

թողած 265 տողանոց սեպագիր արձանագրությունը, որը բացառիկ տեղ է գրավում ուրարտագիտության մեջ։

Հովսեփ Օրբելու ամբողջ տողանցը, որպես բազմահմտության գիտնականի ու հետազոտողի, որպես անսպառ էներգիայի տեր փայլուն կազմակերպչի, դրսևորվում է Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո։

1918 թվականից նա, որպես Պետրոգրադի համալսարանի պրոֆեսոր և մի շարք գիտական հիմնարկությունների ու կազմակերպությունների անդամ, ակտիվ մասնակցություն է ունենում արևելագիտական, արվեստագիտական, հնագիտական հիմնարկները սովետական, սոցիալիստական հիմունքներով կառուցելու և վերակառուցելու գործում։ Անխոնջ գիտնականի կազմակերպչական տաղանդն ու եռանդը հանդես են գալիս Պետական Էրմիտաժում, որտեղ նա աշխատում է սկսած 1920 թվականից։ Հ. Օրբելու ջանքերով է կազմակերպվում Էրմիտաժի հարուստ արևելյան բաժինը և համաշխարհային հռչակ ստանում։ 1934—1951 թթ. նա վարում է Պետական Էրմիտաժի դիրեկտորի պաշտոնը։

1935 թ. Հ. Օրբելին ընտրվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։

1930—1941 թթ. Օրբելու ակտիվ մասնակցությամբ և ղեկավարությամբ սովետական արևելագիտական մեծ դպրոցը արժանի մասնակցություն ունեցավ ինչպես արևելագիտական կոնգրեսներում, այնպես և կարևոր նշանակություն ունեցող խոշոր տարելիցների ժամանակ։

Հ. Օրբելու փայլուն ելույթներն այդ տարելիցներին հիացմունք էին առաջացնում գիտական հասարակայնության լայն շրջաններում։

Սակայն Հ. Օրբելու բեղմնավոր կյանքի բազմաթիվ էջերը կապված են Հայագիտության զարգացման, մասնավորապես Սովետական Հայաստանի գիտության և գիտական օջախների ստեղծման և գիտական կադրերի պատրաստման հետ։

Հ. Օրբելին 1938 թ. ընտրվում է ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահ, 1938—1939 թթ. նա ղեկավարում է «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի հոբելյանը։

1943 թ., Հայրենական պատերազմի ծանր տարիներին Սովետական կառավարության որոշմամբ Երևանում հիմնվում է Հայաստանի գիտական մտքի խոշոր կենտրոնը՝ Գիտությունների ակադեմիան, և նորաստեղծ Ակադեմիայի առաջին պրեզիդենտ է ընտրվում Հովսեփ Օրբելին։ Նա երկար ժամանակ գտնվում էր պաշարված Լենինգրադում, որտեղից նա դուրս չէր եկել, մինչև որ Էրմիտաժի հարստությունները չէին տեղափոխվել թիկունք։ Նա բլոկադայի դաժան պայմաններում, իր հայրենասիրական ելույթներով ոգևորում էր Լենինգրադի պաշտպաններին։ Իսկ Հ. Օրբելին, որպես բացառիկ հանճար և անձնազոհ քարոզչի, դիտեր ոգեշնչել ամենքին։ Նրա մեղադրական ելույթը, որպես վկայի 1946 թ. Նյուրնբերգում ֆաշիստ ավազակապետերի դատին, հնչեց աշխարհով մեկ։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը բարձր են գնահատել Հ. Օրբելու ծառայությունները Հայրենիքի և ժողովրդի հանդեպ։ Նա պարգևատրվել է Լենինի երկու, Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշաններով և մի քանի մեդալներով։

Հանձին Հովսեփ Օրբելու սովետական գիտությունը, մասնավորապես հայագիտությունը, կորցրեց փայլուն տաղանդի և գիտական բացառիկ սուր մտքի տեր հետազոտողի, հարյուրավոր երիտասարդ գիտնականների համար ոչինչ չինայող ուսուցչի, նա կորցրեց գիտության մեջ առաջադեմ, կյանքում անկեղծ ու անմիջական, իրերի ժխորի մեջ մարգարիտը որոնող ու գտնող, բարմահմուտ ու բոցաշունչ հայրենասեր քաղաքացի գիտնականի։

Հովսեփ Օրբելու պայծառ կյանքի համալիշ հիշատակը միշտ անմար կմնա մեր գիտության մեջ և մեր սրտերում։

Հայկական ՍՍՀ Գ.Ս. Նախագահություն

Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետի Բարձրագույն և Միջնակարգ Մասնագիտական կրթության կոմիտե

Հայկական ՍՍՀ Գ.Ս. Հասարակական գիտությունների բաժանմունք

Երևանի Պետական համալսարան